ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020Թ. ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եկամուտներ

Մասիս քաղաքային համայնքի 2020թ.վարչական բյուջեի եկամուտների տարեկան 661387,0 հազ. դրամ առաջադրանքի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 688640,0 հազ. դրամ, կամ տարեկան մուտքերի առաջադրանքը կատարվել է 104,1%-ով, որից սեփական եկամուտների առաջադրանքը՝ 257478,9 հազար դրամի դիմաց կատարվել է 284731,9 հազար դրամ կամ կատարվել է 110,6%-ով՝ :

1.Հարկային եկամուտներ

Հարկային եկամուտների գծով տարվա համար նախատեսված 164232,9 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 188241,4 հազ. դրամ, կամ մուտքերի առաջադրանքը կատարվել է 114,6%-ով, այդ թվում հողի հարկի առաջադրանքը կատարվել է 101,7%-ով, գույքահարկինը՝ 101,7 %-ով, գույքահարկ փոխադրամիջոցներից՝ 132,5%-ով, տեղական տուրքերը՝ 97,5%-ով, պետական տուրքերը՝ 93,9 %-ով:

Տեղական տուրքերի առաջադրանքը՝ տարվա համար նախատեսված 10732,9 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 10461,6 հազ. դրամ, այդ թվում՝ Պետական տուրքերի առաջադրանքը՝ նախատեսված 15000,0 հազ.դրամի դիմաց փաստացի կազմել է 14090,0 հազ. դրամ:

2.Պաշտոնական դրամաշնորհներ

Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիայի և սուբվենցիայի գծով փաստացի մուտքերը կազմել են 398433,8 հազ. դրամ:

3.Այլ եկամուտներ

Այլ եկամուտների առաջադրանքը նախատեսված 98720,3 հազ. դրամի դիմաց, փաստացի մուտքերը կազմել է 101964,7 հազ. դրամ,կամ կատարվել է 103,3%-ով, նույն թվում՝ հողերի վարձակալությունից եկամուտները՝ 99,6%-ով, այլ գույքի վարձակալությունից եկամուտները՝ 99,2%-ով:

Պատվիրակված լիազորությունների համար պետական բյուջեից մուտքերը կազմել է 5474,3 հազ. դրամ:

4. Տեղական վճարների մասով բյուջեում նախատեսված 66767,1 հազ. դրամի դիմաց գանձումները կազմել է 68579,1 հազ. դրամ կամ կատարվել է 102,7%, որից աղբահանության վճարների մասով 46356,0 հազ. դրամի դիմաց գանձվել է 46956,4 հազ. դրամ կամ կատարվել է 101,3%-ով: Համայնքի պատվերով՝ մանկապարտեզների կողմից մատուցված ծառայությունների դիմաց ծնողական վճարների մասով գանձումը կատարվել է 108,4 %-ով, երաժշտական և գեղարվեստի դպրոցների կողմից մատուցված ծառայությունների դիմաց ծնողական վճարների մասով՝ 91.6 %-ով:

Ծախսեր

2020 թ. համայնքի բյուջեի վարչական մասի տարեկան ծախսերը կատարվել է 95,1 %-ով՝ 661387.0 հազ. դրամ առաջադրանքից կատարվել է 628782,6 հազ. դրամ, որից՝ վարչական բյուջեի ծախսերը ըստ ծրագրերի կատարվել են՝

Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով 183657,2 հազար դրամի չափով նախատեսված ծախսերը կատարվել է 91,9 %-ով:

Տնտեսական հարաբերությունների ոլորտում նախատեսված 11117,0 հազար դրամ ծախսերը կատարվել է 95 %-ով:

Շրջակա միջավայրի պաշտպանության համար 87860,9 հազար դրամի չափով նախատեսված ծախսերը կատարվել է 99,2 %-ով:

Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն դասակարգմամբ 28300,0 հազար դրամի չափով նախատեսված ծախսերը կատարվել է 88,5 %-ով:

Հանգիստ, մշակույթ և կրոն դասակարգումով 22414,6 հազար դրամի չափով նախատեսված ծախսերը կատարվել է 76,2 %-ով:

Կրթության ոլորտի համար բյուջեով 306508,8 հազար դրամի չափով նախատեսված ծախսերը կատարվել է 99,5 %-ով:

Սոցիալական պաշտպանության համար 21000,0 հազար դրամի չափով նախատեսված ծախսերը կատարվել է 71,6 %-ով:

Մասիս քաղաքային համայնքի 2020թ. բյուջեի ֆոնդային մասի մուտքերը նախատեսված 514338.0 հազ. դրամի դիմաց կատարվել է 636623.8 հազ. դրամ, որից տարեսկզբի մնացորդը՝

կազմել է 240077.5 հազ. դրամ, գույքի և հողի իրացումից մուտքերը՝ նախատեսված 249288.5հազ. դրամի դիմաց՝ 371574.3 հազ. դրամ, ստացվել է կապիտալ սուբվենցիա՝ 24972.0 հազ. դրամ:

2020 թ. բյուջեի Ֆոնդային մասի ծախսերը կազմել է 178011,2 հազ. դրամ, որից՝

ա/ Նոր ենթակառուցվածքների (քաղաքի 5, 6, 7 թաղամասերի գազաֆիկացում, ավտոճանապարհային նշանների տեղադրում, լուսավորման ցանցի կառուցում, հանգստի տաղավարների տեղադրում, մինի ֆուտբոլի դաշտի և խաղադաշտի կառուցում) ձեռք բերման գործարկման համար՝ 60626,1 հազար դրամ,

բ/ Համայնքային ենթակայության շենքերի , շինությունների հիմնանորոգման, բակերի ճանապարհների, մայթերի, այգիների բարեկարգման համար ծախսերը կազմել է 64598.76 հազար դրամ,

գ/ Համայնքում առկա շենքերի շինությունների հիմնանորոգման, բարեկարգման, նոր կառույցների գործարկման նպատակով նախագծա-նախահաշվային աշխատանքների ձեռք բերման համար ծախսերը կազմել է 15628.1 հազար դրամ,

դ/ Ծառայողական ավտոմեքենայի ձեռք բերման ծախսը կազմել է 6400.0 հազար դրամ,

ե/ Վարչական սարքավորումների ձեռք բերման ծախսերը կազմել է 28458.2 հազար դրամ, որից Երաժշտական դպրոցի համար ձայնային սարքավորումների ձեռք բերմանը՝ 3865.0հազար դրամ, թիվ 2 և 5 մանկապարտեզների գույքի ձեռք բերման համար՝ 6178.0 հազար դրամ, նոր աղբամանների ձեռք բերման համար՝ 2970.0 հազար դրամ, ԼԵԴ լուսատուների ձեռք բերման համար՝ 3488.0հազար դրամ, տեսադիտման և տեսահսկման համակարգերի ձեռք բերման և տեղադրման համար՝ 8340.2հազար դրամ, կառավարման ապարատի կարիքների համար գույքի ձեռք բերմանը 3617.0հազար դրամ:

զ/ Ոչ նյութական հիմնական միջոցների ձեռք բերման համար ծախսերը կազմել է 2300.0 հազար դրամ, որից՝ գրադարանի գրքային ֆոնդի համալրման համար՝ 500.0 հազար դրամ, համայնքային խնդիրների ահազանգման մեկ հարթակ ծրագրի ձեռք բերմանը՝ 1800.0 հազար դրամ:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Դ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Ն.ՍԱՀԱԿՅԱՆ